ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«23» «սեպտեմբերի» 2022 թ. № 330-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 460-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետը և 3-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը, «Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հայաստանի բնության պետական թանգարան» պետական հիմնարկը պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 10-ի N 1638-Ն որոշման 4-րդ կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման 18-րդ կետի 7-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հայաստանի բնության պետական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի բնության պետական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 460-Ա հրամանը:

3. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հայաստանի բնության պետական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո մեկամյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել «Հայաստանի

բնության պետական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության պետական գրանցման իրականացումը:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

9/23/2022

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

<<23>> սեպտեմբերի 2022թ.

ք. Երևան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
2022 թվականի "23" -ի N 330-Ա հրամանի

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ __ՕՐԻՆԱԿ
ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ
21.03.2003թ.
ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 28621004931
ՎԿԱՅԱԿԱՆ 03Ա0599746
Հարկ վճարողի հաշվառման համար 02519651
21.03.2003թ. գրանցված
կանոնադրության
Թիվ 0042 փոփոխությունը
Գրանցված է
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԳՐԱՆՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ
06 10 2022թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

Հավելված
Հաստատված է՝
ՀՀ շրջակա միջավայրի նախարարի
2022թ. մայիսի 24-ի N 330-Ա հրամանով

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի բնության պետական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ կազմակերպություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող բնապահպանական, կրթական և գիտական գործունեություն իրականացնող կազմակերպություն է, որը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ օրենսդրական ու ենթաօրենսդրական իրավական ակտերի հիման վրա, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:

2.Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության /այսուհետ՝ հիմնադիր/: Կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. հոկտեմբերի 10-ի N 1638-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության «Հայաստանի բնության պետական թանգարան» պետական հիմնարկը վերակազմավորման միջոցով վերակազմակերպվել է, կազմակերպությունը հանդիսանում է «Հայաստանի բնության պետական թանգարան» պետական հիմնարկի /գրանցման N 286.0155, վկայական ՆԲ 003912/ իրավահաջորդը:

3.Կազմակերպության կանոնադրությունը դրա հիմնադիր փաստաթուղթն է:

4.Կազմակերպությունն իր նպատակներին համապատասխան իրականացնում է Հայաստանի բնության պետական թանգարանի /այսուհետ՝ թանգարան/ կանոնադրությամբ ամրագրված պահանջների կատարումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

5.Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն, ռուսերեն, անգլերեն անվանմամբ կլոր կնիք, դրոշմակնիք, կարող է ունենալ ձևաթղթեր, խորհրդանիշ, և անհատականացման այլ միջոցներ:

6.Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ «Հայաստանի բնության պետական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը

հայերեն կրճատ՝ «ՀԲՊԹ» ՊՈԱԿ

ռուսերեն լրիվ՝ "Государственный музей природы Армении" Государственная не коммерческая организация.

ռուսերեն կրճատ՝ "ГМПА'' ГНО

անգլերեն լրիվ՝ "The State Museum of Nature of Armenia" State Non- Commercial Organization

անգլերեն կրճատ՝ " SMNA" SNCO

7.Կազմակերպության գտնվելու վայրն է՝

Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Տիգրան Մեծ 34

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

8.Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը բնակչության էկոլոգիական դաստիարակության և կրթության, ինչպես նաև բնապահպանական քարոզչության իրականացմանը նպաստելն է: Այդ թվում՝

ա/էկոտուրիզմի զարգացմանն աջակցելը,

բ/Հայաստանի Հանրապետության բնաշխարհի վերաբերյալ նյութերի, այդ թվում բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների հավաքագրումը,

ուսումնասիրումը, պահպանումը և թանգարանային ցուցադրման եղանակով հանրությանը ներկայացնելը,

գ/թանգարանային հավաքածուների և ցուցանմուշների գիտական ուսումնասիրությունը և գիտական անձնագրավորումը,

դ/թանգարանի պահպանությանը հանձնված հավաքածուների հաշվառումն ու պահպանումը,

ե/թանգարանային հավաքածուների ու ցուցանմուշների, մշտական և ժամանակավոր ցուցադրումը:

9.Կազմակերպությանը թույլատրվում է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները.

ա/կազմակերպություններում կենդանի անկյունների և միկրոթանգարանների գեղարվեստական ձևավորումներ,

բ/թանգարանին կից սիրողական ակումբների (զարդաձկների, դեկորատիվ թռչունների), ցուցահանդեսների կազմակերպում,

գ/Հայաստանի Հանրապետության սակավաքանակ վայրի կենդանիների բազմացում՝ բնություն վերադարձնելու նպատակով,

դ/թանգարանային ցուցադրությունների նպատակով դեկորատիվ բույսերի աճեցում, հերբարային նյութերի մշակում,

ե/վճարովի գիտամասսայական միջոցառումների (ցուցահանդեսներ, երեկոներ, շնորհանդեսներ, թեմատիկ դասախոսություններ և այլն) կազմակերպում,

զ/թանգարանի հավաքածուների ցուցադրման հետ կապված ծառայությունների մատուցում,

է/բնապահպանական թեմաներով հուշանվերների պատրաստում, ցուցահանդես- վաճառքների կազմակերպում և իրացում,

ը/ ցուցահանդեսների, գրադարանի և ֆոնդային արխիվային նյութերի հիման վրա տեղեկատվության և խորհրդատվության վճարովի ծառայությունների մատուցում,

թ/բնապահպանական թեմաներով բուկլետների և այլ տեղեկատվական նյութերի պատրաստում և հրապարակում (հրատարակում),

ժ/զբոսաշրջային գործակալությունների գործունեության իրականացմանն աջակցելը,

ժա/զբոսաշրջային օպերատորների գործունեության իրականացմանն աջակցելը,

ժբ/տեղերի ամրագրմանը և զբոսաշրջային ոլորտի այլ ծառայությունների իրականացմանն աջակցելը,

ժգ/գովազդի տարածման հետ կապված գործունեության իրականացմանն աջակցելը:

10.Կազմակերպությունն աջակցում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների թանգարանների գիտակառուցողական գործունեությանը:

11. Կազմակերպությունն ունի Շիրակի մասնաճյուղ՝ «Արփի լիճ» ազգային պարկի այցելուների կենտրոնում (Շիրակի մարզ, գյուղ Ղազանչի):

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

12.Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորված պետական մարմինը և գործադիր մարմինը՝ կազմակերպության տնօրենը /այսուհետ՝ տնօրեն/:

13.Կազմակերպության հիմնադիրն ունի նրա գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

14.Հիմնադրի բացառիկ լիազորություններն սահմանվում են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

15.Կազմակերպության ընդհանուր կառավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը, որպես լիազորված պետական մարմին:

16.Լիազորված պետական մարմնի լիազորություններն են՝

ա/ կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,

բ/կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,

գ/կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

դ/իրականացնում է պետական կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

ե/կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանների, հրահանգների, կարգադրությունների ու ցուցումների կասեցումը կամ դրանք ուժը կարցրած ճանաչելը,

զ/կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները լսելը և դրանց գործունեության վերստուգման արդյունքները քննելը,

է/ կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողության իրականացումը,

ը/ կազմակերպության տարեկան հաշվետվությունների և տարեկան հաշվեկշռի հաստատումը,

թ/կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

ժ/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմնադիր որոշումներով և պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթների իրականացումը:

17.Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին նշանակում և ազատում է (նրա լիազորությունները դադարում են) լիազորված պետական մարմինը: Տնօրենը օրենքով, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական

մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար;

18.Կազմակերպության տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը: Պայմանագրում սահմանվում են նրա իրավունքները,պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի, պետական կազմակերպության կառավարման այլ մարմինների հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարեցման օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը կգտնեն անհրաժեշտ: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

19.Տնօրենի պաշտոնում նշանակված անձը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

20.Տնօրենի պաշտոնում նշանակված անձը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և/կամ պետությանը պատճառած վնասի համար: Տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

21.Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի, լիազորված պետական մարմնի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

22.Տնօրենն իրականացնում է օրենսդրությամբ սահմանված և պայմանագրով իրեն տրված այլ լիազորություններ:

23.Տնօրենի բացակայության դեպքում լիազորված պետական մարմնի գրավոր որոշման համաձայն այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

24.Տնօրենի տեղակալները նշանակվում են կազմակերպության տնօրենի կողմից:

25.Տնօրենը՝

ա/առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ,

բ/օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

գ/ տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ/ աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում է կարգապահական տույժեր,

ե/ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի գանձապետարանում բացում է հաշիվներ,

զ/ կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

է/սահմանում է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը,

ը/ հաստատում է պետական կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները, եթե սույն լիազորությունը վերապահված չէ կոլեգիալ կառավարման մարմին, աջակցում Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների թանգարանների գիտակառուցողական գործունեությանը,

թ/նշանակում է կազմակերպության ենթակա հիմնարկների, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին, նրանց տալիս է համապատասխան լիազորագրեր,

ժ/ օրենքով և կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ և տալիս կատարման պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

ժա/ապահովում է կազմակերպության գործունեության վերաբերյալ համապատասխան հաշվետվությունների կազմումը և սահմանված կարգով ներկայացումը լիազորված պետական մարմնին,

ժբ/ սահմանում է սույն կանոնադրությամբ նախատեսված ծառայությունների սակագները՝ համաձայնեցնելով պետական լիազոր մարմնի հետ:

26. Տնօրենին կից կարող է գործել թանգարանի գիտական խորհուրդ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Թանգարանի գիտական խորհրդի կազմը և աշխատակարգը հաստատում է կազմակերպության տնօրենը:

27. Թանգարանում գործում է թանգարանային ցուցանմուշների ընդունման հանձնաժողովը, որի կազմը հաստատում է կազմակերպության տնօրենը:

28.Ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ կազմակերպության աշխատակիցների առողջությանը և գույքին պատճառված վնասի հատուցումը կատարվում է օրենքով սահմանված կարգով:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

29.Կազմակերպությունն անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով տիրապետում է իրեն հատկացված և ամրացված գույքին:

30.Թանգարանային առարկաները և թանգարանային հավաքածուները կազմում են թանգարանի հիմնական ֆոնդը և պահպանվում են պետության կողմից: Թանգարանը ֆոնդերի համալրումը իրականացնում է գնման, նվիրատվության, կտակի, հավաքագրական եղանակով:

31.Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված դրամաշնորհներից և կազմակերպության կողմից միջոցառումների իրականացման ու տարբեր ծառայությունների մատուցման դիմաց վճարումներից, հովանավորչական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ մուտքերից:

32.Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է իր կանոնադրական նպատակներին

համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

33.Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության արժույթով կամ արտարժույթով:

Y. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

34.Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել հիմնադրի որոշմամբ և/կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կազմակերպության լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: